ցողքդ տուք զողորմին»։ Մահ. Եուսուֆի անուամբ Ս. Յակոբի վանքին յիշատակուած է ոսկի սկիհ մը հետևեալ յիշատակարանով՝ ուր յիշուած են անոր մօտաւոր ազգականները. «Յիշատակ է ոսկի սկիհս Ստամպոլցի մահ. Եուսուֆին և իւր ծնողացն Զուխանճի Օհանին և իւր կողակցոյն Սիմային և կողակցւոյն մահ. Կիւհէրին և Նորին ծնողացն Փանոսին և մահ. Կիւլինէին և իւր որդւոցն և դստերացն և բոլոր կենդանեացն ննջեցելոցն ի դուռն Ս. Յակոբայ Թուին Հայոց ՌՃՂԹին (=1750)։ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, ամէն»։ (Ցուց. Պ. Նաև Նալեան. ՄՁ. Թ. 1002)։

ՅՈՎՍԷՓ (ՈՒՍՈՒՖ) ԿԵՍԱՐԱՑԻ.— 1605ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ձեռագիր Աւետարան մը գրաւէ կ'ապատէ և կը նուիրէ Ս. Յակոբի հետևեալ յիշատակարանի համաձայն. «Աստուած աւրհնէ զՂասարցի մահտեսի Ուսուֆն, որ եկաւ Երուսաղէմ և բազում բարութիւնս արաւ Ս. Յակոբայ, մանաւանդ որ երեսի լ. կարմիր ոսկի և ազատեց զայս սուրբ աւետարանս ի ձեռաց այլազգեաց և եդ յիշատակ ի դուռն Սուրբ Յակոբայ վասն իւր հոգւոյն և իւր ծնողաց... ի թվին ՌԾԴ» (=1605)։ (ՄՁ. Թ. 1957)։

ՅՈՎՍԷՓ ՍՐԿ. ԱՇՃԵԱՆ, ԱՑՆԹԱՊՑԻ. — Մբ. աշկ. Լսպ. Մեղրիկ Մկրտիչ եպս.ի։ Յովսէփ սրկ.ի արդիւնքով Յովհաննէս պտրք. կը գնէ Պերութի Ս. Նշան վանքին տունը յարակից գետինով 125,000 ղրշ.ի. ինչպէս կը վկայէ հետևեալ յիշատակարանը՝ որ զետեղուած է նոյն վանուց ճակատը։

«Օծմամբ սրբեցելով հաստատեցաւ եկեղեցիս յանուն Ս. Նշանի Փրկչին, ի յիշատակ նախահաւատ ժողովրդեան Հայոց, բարեջան տենջանօք սրբոյ գահին Երուսաղէմի Տ. Տ. Յովհաննու սրբազան պատրիարքի Զմիւռնիացւոյ, ի մատուցումն պաշտաման սրբազան խորհրդոյ ի փառս ամենասուրբ Երրորդութեան, գնեալ արդեամբ Յովսէփ սարկաւագի Այնթապցւոյ միաբանի սրբոյ աթոռոյն Երուսաղէմի։ Ցամի 1851 ի Փետր. 28»։

1842ին Յովսէփ սրկ.ի ծախքով կը տպագրուի Ս. Յակոբի վանքի տպարանին մէջ Ն. Լամբրոնացիին Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի գիրքը. ի յիշատակ պանծալի անուան վարդապետին իւրոյ. ի Քս. հանգուցեալ շուսարար Մկրտիչ Արքեպս.ին։ Յովսէփ սրկ. վախճանած է Այնթապի մէջ 1866 սեպտ. 22ին, իր թո-